

նորոգիչ մեծ ուժը: Նրանում տիրապետում էր նորի ստեղծման ու հնի կործանման խանդավառություն, մասսաների հեղափոխական հզորության փառաբանման պաթոսը:

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո, գրական մյուս ժանրերի հետ միասին, զարգացման նոր ասպարեզ դուրս եկավ նաև հայ վիպասանությունը: Սովետահայ վեպի անցած բարդ ու դժվարին ուղու համառոտ ուրվագիծն է տրված Ս. Աղաբաբյանի հոդվածում: Սովետահայ վեպի զարգացումը բնության առնելով բոլոր տասնամյա ժամանակաշրջանների, Ս. Աղաբաբյանը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր տասնամյակում հասարակական, ստեղծագործական ինչ խնդիրներ են կանգնած եղել սովետահայ վիպասանների առջև և ինչ լուծումներ են ստացել, ինչպիսի թերություններ են ուղեկցել մեր վիպասանությանը և որոնցից է նա ազատագրվել:

Ժողովածուն եզրափակվում է Ս. Բաղդասյանի «Հեղափոխական արևելքի երգը» և Ն. Աղալյանի «Ժողովրդի նահատազիրը ինքնակենսագրական վեպերում» հոդվածներով:

«Հեղափոխությունը և հայ գրականությունը» ժողովածուն խորացնում է հեղափոխության ու գրականության կապի վերաբերյալ եղած պատկերացումները և լրացնում է սովետահայ գրականությանը նվիրված ուսումնասիրությունների ցանկը: Սովետահայ գրականագետները շնորհակալ աշխատանք են կատարել մեր ժողովրդի հոգևոր մշակույթի վրա Հեղափոխության հեղափոխության թողած բազմակողմանի ազդեցությունը ուսումնասիրելու ուղղությամբ, ազդեցություն, որի հիշատակը բնութագրում է մեծապես կոզմի նաև բացահայտելու այսօրվա գրական շատ երևույթների արմատները:

Ա. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Н. В. АРУТЮНЯН, *Новые урартские надписи Кармир-блур*, Издательство Академии наук Арм. ССР, Ереван, 1966, 104 стр.+26 табл., цена 86 к.

Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Կարմիր-բլուրի ուրարտական և նոր արձանագրությունները*, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1966, 104 էջ — 26 աղյուսակ, գինը 86 կ.:

1961—1963 թթ. ընթացքում Վանի թագավորության բազմահարուստ հուշարձանների թիվը համարվեց ևս մեկով: Բեյշերաինի հնադարյան քաղաքի միջնաբերդի վերին շերտերի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին ուրարտական առավել խոշոր տեքստերից մեկի ընդարձակ հատվածներ: Ընթացում են, որ Բեյշերաինի ուրարտական տաճարներից մեկի շարվածքի բազալտե սրբատաշ վեճերի վրա փորագրված այդ արձանագրությունը պարունակել է 22 տողանոց տեքստ՝ 3 մ 80 սմ ընդհանուր երկարությամբ:

Ոճով ու բովանդակությամբ ուրույն և ինքնատիպ ուրարտական այս բնագրի պահպանված հատվածների ընթերցմանը, մեկնաբանմանը և թարգմանությանն է նվիրված Ն. Վ. Հարությունյանի զրախոսվող աշխատությունը, որը կատարված է ժամանակակից արևելագիտության մակարդակի վրա և առաջնակարգ նշանակություն ունի ինչպես Բեյշերաինի քաղաքի, այնպես էլ Հայաստանի մշակույթի ուրարտական դարաշրջանի պատմության համար: Արձանագրության նշանակությունը ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ նրանում տեղ են գտել ցայտմ ան-

հայտ ուրարտական բառեր և բառակապակցություններ, որոնք թեև ոչ բոլոր դեպքերում են ինթարկվում ճշգրիտ մեկնաբանությունների, այնուամենայնիվ, զգալի շափով հարստացնում են ուրարտերենի բառային ֆոնդը և քերականական կառուցվածքը:

Արձանագրության առանձին հատվածների՝ հեղինակի կողմից առաջադրված թարգմանությունները, որոնք արված են Ուրարտուի վիմագրական ամբողջ նյութի ուսումնասիրության հիման վրա, համոզիչ ձևով ցույց են տալիս, որ Ռուսա II (Արգիշտիի որդի) թագավորը իր զահակությունից առաջին տարիներին (մ. թ. ա. 685—645 թթ.) ուրարտական պանթեոնի գերագույն աստվածների՝ Խալդիի, Թեյշերայի, Շիվինիի, գերագույն աստվածուհի Ուարուրանիի (Խալդիի կինը), ինչպես և տեղական (Աղա երկրի) աստված Խուարշայի պատվին Բեյշերաինի քաղաքում կառուցել է հինգ հոյակապ տաճարներ: Նոր արձանագրության սույն տվյալները հաստատում են այդ սրբազան քաղաքի միջնաբերդի երկրորդ հարկում պեղումներով ի հայտ բերված խիստ ամրացված հարթակների առկայու-

թյամբ, որոնք արձանագրությունում հիշատակված տաճարային շենքերի հիմքերն են հանդիսանում:

Այնուհետև, ինչպես պարզում է ն. Հարությունյանը, արձանագրությունը պատմում է պաշտամունքային շինությունների հիմնադրման, ավարտի և ուրարտական թագավորի Թեյշերախի ժամանակու (որին, ի դեպ, մատուցվում է, հավանաբար զուշակության համար, զոհաբերված կենդանիների սիրտը և այլ ներքին օրգաններ) կապակցությամբ նախատեսված զոհաբերությունների մասին, որոնք, բոլոր երևույթին, կրկնվել են բավականաչափ հաճախ: Միջնաբերդի տաճարներում աստվածներին ոչ միայն զոհաբերվել են զուլեր, կովեր, ոչխարներ, ուլեր (որոնց մնացորդները պահպանվել և հայտնաբերվել են միջնաբերդի հատուկ պահեստասենյակներում), այլև նվիրաբերվել սրբազան ղենքեր՝ ճոխ զարդարված բարձրարվեստ վահաններ, սաղավարտներ, կապարճներ, զրահներ, նետասլաքներ, որոնց վրայի՝ խալիկին հասցեագրված արձանագրություններից երևում է, որ Ռուսա II-ի ծավալուն տեքստում հիշատակված են հենց այդ սրբազան ղենքերը:

Արձանագրության վերջում ղետեղված է անեծքի ֆորմուլան. «Ռուսան, Արգիշտիի որդին, ասում է՝ ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով [այն] ջարդի, ով [այն] թաքցնի, ով ուրիշին ստիպի կատարել այդ [գործերը], ով ասի՝ «ես եմ կատարել [այդ բոլորը]»... Եթե որևէ մեկը [արձանագրությունը] այստեղից տանի, թող ոչնչացնեն [ներան] խալիկ, Թեյշերա, Շիվինի, Մարդուկ աստվածները. թող չլինի ոչ [ներա] անունը, ոչ [ներա] ընտանիքը արևի տակ...»:

Թեյշերախիի սեպագիր տեքստի վրա կատարված մանրակրկիտ աշխատանքը հնարավորություն է ընձեռնում նաև մասնակիորեն վերականգնելու Վանի թագավորության արևելյան նահանգների տնտեսական և կրոնական կենտրոն Արգիշտիխիի քաղաքից ծագող Սարգուրի II թագավորի պաշտամունքային մեծ արձանագրության տեքստը: Ն. Հարությունյանն այստեղ համոզիչ փաստարկներով ցույց է տալիս Արգիշտիխիի և Թեյշերախիի ծավալուն արձանագրությունների հատվածների նույնականությունը, ընդգծում այն կարևոր փաստը, որ մ. թ. ա. VII դարի թագավոր Ռուսա II-ը համարյա ամբողջովին պատճենել է իր նախապապի՝ Սարգուրի II-ի արձանագրությունը, քանի որ, ակներևաբար, երկու ղեկավարում էլ արձանագրությունները բառացիորեն կրկնում են տաճարային շենքերի կառուցման և մատուցվող զոհաբերությունների փաստը:

Այսպիսով, պարզվում է, որ միայն Սարգուրիի կողմից Արգիշտիխիի քաղաքում կառուցվել

է հինգ կամ վեց տաճար, որոնք, Արգիշտի I-ի հիմնադրած պաշտամունքային և քաղաքական մյուս շինությունների հետ միասին, շարունակել են իրենց գոյությունը շուրջ հարյուր տարի՝ ընդհուպ մինչև Ռուսա II-ի թագավորությունը: Ըստ այդմ հեղինակին հաջողվել է ապացուցել, որ Արգիշտիխիից ծագող NK11, 143՝ մասնագետների կողմից մինչև օրս էլ Արգիշտի I-ին վերագրվող արձանագրությունը, անկասկած, հանդիսացել է սարգուրյան տեքստի մի փոքրիկ հատվածը:

Նմանօրինակ աշխատանք է կատարված հեղինակի կողմից նաև Վանա լճի հյուսիսային ափից՝ Արծկեից (Ադիլջեվադ) գտնված պակասավոր մի արձանագրության վերաբերյալ, որը համարյա ամբողջովին համընկնում է կարմիրբլուրյան, դարձյալ թերի, երկրորդ տեքստի հետ: Այս բնագրերը փոխադարձաբար լրացնում են միմյանց և օժանդակում նրանց մեկնաբանությանը: Այդ երկու տեքստերի համադրության առթիվ ն. Հարությունյանը գրում է. «Սույն ադիլջեվադյան և կարմիրբլուրյան երկրորդ տեքստերի դարմանալի նմանությունը, գեո ափին, ուղղակի նույնականությունը, պերճախոս վկայում են, որ ինչպես Թեյշերախի քաղաքամրոցի միջնաբերդում, այնպես էլ Ադիլջեվադի շրջանում, ակներևաբար, կառուցվել է պաշտամունքային շինությունների միատեսակ զուգորդություն...» (էջ 78). ի դեպ բացահայտվում է, որ Արծկեի արձանագրության կաղմողը, ինչպես նաև այդ լճափնյա քաղաքի տաճարների ստեղծողը, եղել է ոչ այլ ոք, քան միևնույն Ռուսա II թագավորը:

Վերոհիշյալ երկու տեքստերի համեմատական ուսումնասիրության իման վրա ն. Վ. Հարությունյանը բերում է Կարմիրբլուրի արձանագրության մասամբ վերականգնված երկրորդ տեքստի զիտական տառադարձումը, ինչպես նաև Արծկեի և Կարմիրբլուրի արձանագրությունների մեղ հասած հատվածների համահավաք տեքստը (էջ 51—53): Շրջահայեցությամբ ձեռնպահ մնալով նշված երկրորդ բնագրի ավելի կամ պակաս կապակցված թարգմանությունից, հեղինակը բնորոշողի ուշադրությանն է ներկայացնում այն փաստը, որ արձանագրության հիշյալ հատվածները աչքի են ընկնում միանգամայն յուրահատուկ բառապաշարով, որի մանրամասները, զմրախտաբար, առայժմ ենթակա չեն ճշմարտացի մեկնաբանության (էջ 53):

Չսահմանափակվելով, սակայն, տեքստի ամենաբնույթանուր բովանդակության մեկնաբանությամբ, հեղինակն այստեղ առաջարկում է առանձին բառերի, բառակապակցությունների ու արտահայտությունների միանգամայն հետաքրքիր բացատրություններ, նմանօրինակ՝ մեկնա-

բանությունների շարքը, ակներևաբար, պետք է զասել արմավիքյան արձանագրությունների *tisni*-ն կամ *tisnu*-ն, որը համապատասխանում է խուրրիական տեքստերի նույն կարգի գրություն ունեցող համարժեք բառին և Կարմիր-բլուրի արձանագրության *ŠA* «սիրտ» գաղափարադրին (էջ 28): Համոզիչ է թվում նաև *paḥazuli* բառի «կահավորել» մեկնաբանությունը, եթե նկատի ունենանք, որ տեքստում այն հետևում է *šidištuli* «կառուցել» անցողիկ բային: Ի դեպ այդ երկու բայերն էլ անմիջապես վերաբերում են տաճարներին և նրանցում կատարվող ծիսական արարողություններին: Ըսկ արարողություններն ու զոհաբերությունները, ինքնին հասկանալի է, պետք է ձեռնարկվին տաճարները կառուցելուց (*šidištuli*) և կահավորելուց (*paḥazuli*) հետո:

Պատմա-մշակութային տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում *ququḥani* բառին տրված «մեծ տաճար» մեկնաբանությունը, ի տարբերություն հրատարակված նոր արձանագրություններում հանդիպող «փոքր տաճարի» (*Ē. BAR TUR*): Նման մեկնաբանությունից հետևում է, որ Թեյշեբաինի սրբազան քաղաքում գոյություն են ունեցել տաճարային շենքերի երկու խմբեր՝ մեծ տաճարն իր «*SUSI* տուն» ու «*Խալդի աստծո դոններ*» և փոքր տաճարը՝ «*Խալդի աստծո տուն*», «*širihanī* տուն» ու «*adu-nusini* տուն» բաղկացուցիչ մասերով (էջ 15—16 և այլուր):

Որոշ արձանագրությունները ուրարտերենը հարստացնում են նաև մի շարք այլ ուրույն փաստերով: Այդ տեսակետից առանձնապես կարևոր է *-me* անձնական ղերանվան նոր գործածությունը, ի տարբերություն նախորդ գործածությունների, երբ այդ *me*-ն հանգես էր գալիս *Խալդի ղիցանվան* (*DHaldis-me* «*Խալդին-ին*»), անցողիկ բայերի (*aru-me* «(նա) տվեց-ինձ», *artu-me* «(նրանք) տվեցին ինձ») և *Yluse* հարաբերական ղերանվան (*aluš-me* «տվ-ինձ») հետ, հրատարակված նոր արձանագրություններում *me* անձնական ղերանունը հանդիպում է իս «երբ» ժամանակի մակրայի հետ միասին (*iu-me* «երբ-ինձ»): Այս փաստը բացառիկ է ուրարտերեն վիճադրերում (տե՛ս էջ 11):

Ինչպես հայտնի է, ուրարտերեն սեպագրերում *GIS*-ը ցայժմ հանդես էր գալիս որպես *suri* «զենք», *GIGIR* «մարտակառք», *šari* (հմմտ. հայերեն «ծառ») «մրգատու այգի» *uīdi* («*GESTIN*») «խաղողի այգի», «գինի», *šamše* «հացը (ղաշտում)» և այլ բառերի ու գաղափարադրերի պետերմինատիվ (որոշիչ): Բացառիկ պեպքերում *GIS*-ը հանդես է

գալիս գաղափարադիր ասումով, ըստ որում սոսկ «մրդի այգի» իմաստով: Միանգամայն հետաքրքրական է, որ ի տարբերություն *GIS*-ի հիշյալ գործածությունների, գրախոսվող աշխատության հեղինակը հրատարակված նոր արձանագրությունների *GIS*-ը համապարհ է համարում *BE.LI* «զենք» բառին (էջ 48):

Ն. Հարությունյանի դրքում բերվում են նաև ուրարտերեն վիճադրերի մի շարք այլ նորագույն մեկնաբանություններ, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ուրարտագիտության, ինչպես նաև ընդհանրապես արևելագիտության համար: Սակայն գրախոսության ծավալը հնարավորություն չի ընձեռում կանգ առնելու քննարկվող աշխատության մեջ հանդիպող բոլոր նոր մեկնաբանությունների վրա:

Ն. Հարությունյանի հետազոտությունը ավարտվում է «Աղաներկրի պատմությամբ», որն ամբողջացվել է հրատարակված արձանագրությունների մատուցած նորագույն նյութերով, ինչպես նաև արդեն հայտնի գրավոր աղբյուրների համապատասխան տվյալների մանրազնին ուսումնասիրությամբ: Ի տարբերություն ուրարտագիտության մեջ նախկինում լայն տարածում գտած այն կարծիքի, ըստ որի Աղա երկիրը սովորաբար տեղադրվել է Արդիշտիխինիլի շրջանում, նոր արձանագրությունների հիման վրա հեղինակն իրավացիորեն եզրակացնում է, որ Թեյշեբաինի-Կարմիր-բլուրն ու Էրերունի-երևանը ևս, անկասկած, մտել են այն ժամանակվա համար լայնատարած Աղա երկրի մեջ: Դրան կարելի է ավելացնել, որ այդ երկրի տերիտորիալ սահմանների մեջ են մտել, մեր կարծիքով, նաև մի քանի ավելի մանր բնակատեղիներ՝ Արագածի ստորոտում և Արաքսի ու Ախուրյանի խառնարանում, Մեծամորի և Քասախի ավերին: Աշխատության հիշյալ բաժնում հեղինակը առաջին անգամ ընդհանրացնում է Աղա երկրի պատմության վերաբերյալ եղած բոլոր գրավոր աղբյուրները: Այդ տեսակետից նա հանգամանորեն դիտում է Վանի թագավորության այդ կարևոր նահանգի տերիտորիայի տեղադրման, քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության, ինչպես նաև էթնիկ կազմի բացահայտման հետ կապված մի շարք առաջնակարգ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Հիշյալ բաժինը, ամբողջությամբ վերցված, մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ուրարտուի պատմության ընդհանուր ֆոնի վրա: Աղայի տեղադրման հարցերը քննարկելիս հեղինակը միանգամայն իրավացիորեն եզրակացնում է, որ նրա տերիտորիան տարածված է Լեզի, հավանաբար, Արարատյան դաշտավայրի զգալի հատ-

վածում «սկսած Հոկտեմբերյանի շրջանից, էջ-միածնի շրջանով, ընդհուպ մինչև Սովետական Հայաստանի մայրաքաղաքը» (էջ 83)։ Այստեղ ն. Հարությունյանը, ղժբախտաբար, չի շարունակում իր ուսումնասիրությունը Աղա երկրի սահմանների հետապա մանրամասները պարզելու և ճշգրտելու ուղղությամբ։ Մինչդեռ դրավոր աղբյուրների տվյալները և նահանգի ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկությունները, մեր կարծիքով, ավելի հստակ ձևով են դժագրում նրա տեղադրման պատկերը։ Արարատյան դաշտավայրի առավել արգավանդ այդ կենտրոնական հատվածը, որի ուղղումն ապահովվում է Արաքսի, Հրազդանի, Մեծամորի և Քասախի ջրերով, շրջապատված է լեռնաշղթաներով և Արագածի նախալեռնային բարձունքներով՝ հյուսիսից, Կոտայք բարձրավանդակով և Գեղարքունյաց նախալեռներով՝ արևելքից, Ախուրյանի ջրերով՝ արևմուտքից, Արարատյան զանգվածով ու Արաքսով՝ հարավից։ Ի դեպ Աղայից դեպի հյուսիս-արևելք տարածվել են Ուլուանի և Գիարնիանի երկրները, դեպի հարավ՝ Երեկոտախին, դեպի արևմուտք՝ Երեխին և Ուխտերուխին։ Այդպիսին է, մեր հայեցակետից, Աղա երկրի տերիտորիալ պատկերը։

Եթե լիովին անկասկած է հեղինակի կարծիքը «Կուարլինի հովիտը» Աղա երկրի սահմաններում, Հրազդան գետի աջափնյա հատվածում տեղադրելու առթիվ, ապա զգալի կասկածներ են հարուցում մի կողմից՝ Իլդարունիայի ու Հրազդանի, մյուս կողմից՝ Թեյշեբախինի ու Զվարթնոցի արձանագրության անանուն քաղաքի նույնացումները (էջ 82—83)։ Մեզ թվում է, որ այստեղ իրավացի է նիկոզայոս Աղոնցը, երբ ուրարտական Իլդարունիան կապում է Քասախի հետ։ Բնականորեն Զվարթնոցի արձանագրության մեջ պետք է հիշատակված լինի Ռուսա II-ի կողմից Քասախի ավին կառուցված ինչ-որ ուսզմա-հենակետային մի բնակավայրի մասին։ Այդպիսի ամրոց-բնակատեղիներ գտնվել են էջմիածնի շրջանում (Արագածի, Մաղկունքի բերդերը և այլ ամրոցներ հետագա Երվանդաշատի և Երվանդակերտի շրջանում) և նրանք ստեղծվել են, անկասկած, ուրարտական արքաների ջանքերով՝ Աղա երկրի պաշտպանունակությունն ապահովելու նպատակով։

Այնուհետև հեղինակը բերում է էրեբունի, Արգիշտիխինիլի և Թեյշեբախինի քաղաքների ստեղծման հանգամանալի պատմությունը, բացահայտում նրանց պատմական դերը Ուրարտուի մ. թ. ա. I հազարամյակի առաջին կեսի մշակույթի պատմության տարբեր էտապների որոշակի պայմաններում և միանգամայն իրավացիորեն ցույց է տալիս էրեբունի ու Արգիշտիխինի քաղաքների ռազմա-ստրատեգիական և

տնտեսական առաջատար նշանակությունը ուրարտական մշակույթի ծաղկման ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև մ. թ. ա. VIII դարի վերջը, ինչպես նաև Թեյշեբախինի բարձրացումը պետության վայրէջքի շրջանում՝ մ. թ. ա. VII դարում և VI դարի սկզբին։ Հեղինակի ընդհանուր հայեցակետն այստեղ բնավ առարկությունների ենթակա չէ։ Սակայն էրեբունիի հարցում, «րինակ, ընդհանուր առմամբ կանգնած լինելով այն ճիշտ դիրքերում, որ ուշ շրջանում (VII—VI դդ.) նա իր առաջատար դերը զիջում է նորակառույց Թեյշեբախինին (չնայած առաջվա նրման շարունակում է իր գոյությունը, տես էջ 88), այնուամենայնիվ, մի այլ դեպքում, կարծում է, թե էրեբունին զոհ է դարձել ինչ-որ թշնամական հարձակման, ըստ որում այդպիսի թշնամիներ նա հակված է համարելու էթիունյան և ուղուրի-էթիունյան հղոր ցեղային միությունները (էջ 89)։ Նշենք, որ էրեբունի—Երևանի հարատևման ճշգրիտ զաղափարը ն. Հարությունյանը հանդամանորեն արտահայտել է դեռևս 50-ական թթ. վերջին՝ իր «Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը» հոդվածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 78—96), իսկ այստեղ պարզապես վրիպել է։

Մյուս կողմից, մեզ թվում է, թե տնտեսական տեսակետից Թեյշեբախինի դիջել է Արգիշտիխինի քաղաքին նույնիսկ իր ծաղկման շրջանում։ Ընդգծելով Թեյշեբախինի տաճարային տնտեսությունների գոյության հավանականությունը, ն. Հարությունյանը, ղժբախտաբար, համարյա անտեսում է իրեն իսկ քաջ հայտնի փաստերը Արգիշտիխինիլիում պետական, տաճարային, մասնավոր տնտեսությունների, լայնատարած ոռոգման ցանցի, հնագիտական նորագույն նյութերի (բազմաթիվ պահեստային սենյակների, գինու մառանների և այլնի) առկայության մասին։ Ժիշտ է, այդ մասին հեղինակը բերում է որոշ աննշան տեղեկություններ (էջ 91), սակայն դրանք ամենևին բավարար չեն Արգիշտիխինիլի միանգամայն հարուստ տնտեսության իրական պատկերը արտահայտելու համար։

Վերին առտիճանի ակնառու ապացույցներ է բերում հեղինակը Աղա երկրի հացահատակային հսկայական տնտեսության մասին։ Նա ընթերցողի ուշադրությունը իրավացիորեն բևեռում է այն կարևորագույն փաստերի վրա, որ «...ուրարտական հացահատիկային հայտնի վեց շտեմարաններից ուղիղ կեսը կառուցվել է մեզ հետարբերող Աղա ծայրամասային մարզում և նրանցում կուտակված հացահատիկի պաշարները (16 հազար 632 «կապի») կազմել են ուրարտական հացահատիկային շտեմարանների ընդհանուր պաշարների (60 հազար 332 «կապի») ավելի քան քառորդ մասը։ Նմանօրինակ փաս-

տերը, անկասկած, լիարժեք պատկերացում են տալիս այն նշանակության մասին, որ ունեցել է Ազա բերրի երկիրը ուրարտական պետության երկրագործության զարգացման բնագավառում (էջ 90 և ծանոթ. 39)։ Գրավոր աղբյուրների և ննագիտական հարուստ նյութերի հիման վրա գրքում հստակորեն բնութագրվում են նաև տրեստետության մյուս առաջատար ճյուղերը (անասնապահություն, խաղողագործություն, այգեգործություն և այլն)։

Գրախոսվող աշխատության վերջին էջերը ներվիրված են Ազա երկրի բնակչության էթնիկական կազմի պարզաբանմանը։ Ռազմա-քաղաքական, վարչական և պաշտամունքային բնույթի բազմազան գրավոր վավերագրերի մանրակրկիտ քննարկման հիման վրա ցույց է տրված այդ պատմա-մշակութային կենտրոնի բազմերանգ էթնիկական պատկերը։ Պարզվում է, որ այն հեռավոր ժամանակներում (մ. թ. ա. VIII—VI դդ.), ինչպես և Հայաստանի պատմության ու շրջանում, Արաքսի հարթավայրի բնակչությունը համասեռ չի եղել։ Այդ տերիտորիան նույն բնակեցված է եղել ոչ միայն տեղացի ազայցիներով, այլև բիայնացի-ուրարտացիներով, նեղեվրոպական խեթերով (Փոքր Ասիայի հաթե երկրից), ծուփանցիներով (ուշ շրջանի հայկական Մոփքից), արիլիանիսցիներով (ուշ շրջանի հայկական Արեղյանքից) և, նույնիսկ, բարեկացիներով։ Այս վերջինների վերաբնակեցումը Ազա երկրում ն. Հարությունյանը, սպազորական տվյալների համաձայն, հակված է վերագրելու Արգիշտի I-ի և Սարգուրի II-ի թագավորության, այսինքն՝ մ. թ. ա. 781 և 750 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում ղեկի Բաբելոն ձեռնարկված հայտնի արշավանքներին։ Այդ մասին, ինչպես գիտենք, արժեքավոր փաստեր են պարունակում Արգիշտի I-ի և Սարգուրի II-ի տարեգրությունները։ Այս կապակցությամբ ա-

կամայից հարց է ծագում. ուրարտական թագավորների կողմից ձեռնարկված բարեկական բնակչության մասսայական զերեվարման իրական դեպքերը չեն հանդիսացել արդյոք Հայկի և Լեւի առասպելի պատմական հիմքը, առասպել, որ այնքան ճշմարտանման ու հավերժ կենդանի ձևով բնութագրված է Մովսես Խորենացու անմահ պատմության մեջ, «Հայկի ցեղը» չի սերում, իսկապես, հենց Բաբելոնից, ինչպես այդ հաստատում է Խորենացին։

Ն. Հարությունյանի գրքի վերջում զետեղված են արձանագրություններում հանդիպող բառերի, զաղափարագրերի, անձնանունների ու տեղանունների ցանկը, ընթերցված ու մեկնաբանված գրավոր փաստաթղթերի բավականաչափ հստակ լուսանկարները և հեղինակի կողմից պատրաստված ձեռագիր բնագործակամները։

Հիշատակության արժանի է այն ջանասեր աշխատանքը, որ «Ուրարտական նոր արձանագրություններ» գրքի վրա կատարել են նաև պատասխանատու խմբագիր՝ Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ա. Մելիքիշվիլին, առաջարանի հեղինակ՝ Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակիցանդամ Բ. Բ. Պիտրովսկին, ինժեներ-քարտեզագիր Հ. Ն. Գործակալյանը, որի զրչի արդյունքն է գրքի բավական ճաշակով ձևավորումը, ՀՍՀ ԳԱ հրատարակչության և էջմիածնի տրոյարանի կոլեկտիվները։ Հատկանշական է, որ տեխնիկական բարդ այդ գիրքը լույս է ընծայվել համարյա առանց վրիպակների։

Բարի ճանապարհ մաղթենք Ն. Վ. Հարությունյանի նոր աշխատությանը, հուսալով, որ այն կդառնա սեղանի դիրք շատ ու շատ արևելագետների համար։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

С. Б. АШУРБЕЯЛИ. *Очерк истории средневекового Баку* (VIII—начало XIX вв.). Издательство Академии наук Аз. ССР, Баку, 1964, 336 страниц.

Более одного тысячелетия охватывает история средневекового Баку. Понятно поэтому, что монографию, посвященную этой многовековой и достаточно содержательной истории, можно только приветствовать. Надо полагать, что автор, скромно называя свою работу очерком, учитывает длительность охвата времени, а также известную

скудность данных письменных источников и недостаточно широкие размеры проведенных в Баку археологических работ. Тем не менее автор книги Сара Ашурбейли, стремясь изложить возможно более связную историю средневекового Баку, скрупулезно изучила многочисленные источники, как письменные, так и археологические, и ма-